ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 18.04. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով (ZOOM հարթակի հավելվածով):
Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորս):
Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Թ. Խաչատրյան՝ գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

Պարոն Սերոբյանը ներկայացրեց ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված՝ արտակարգ դրության պայմաններում, համալսարանում հեռավար ուսուցման կազմակերպման հետ կապված կազմակերպչական առաջնահերթ խնդիրները.

1. Հեռավար ուսուցման կազմակերպման տեխնիկական հարցերի մասին
2. Հեռավար ուսուցման հետ կապված բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
   Համալսարանի ավարտական կուրսերի մագիստրական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման մասին
3. Ուսանողների վարձավճարների վճարման ժամկետների մասին
4. Էլեկտրոնային մատյանների և ստուգումների ամփոփաթերթերի նոր ձևաչափերի մասին
5. բակալավրիատի հեռակա կրթական ծրագրով սովորող ուսանողների երկրորդ կիսամյակի դասապրոցեսը կազմակերպելու մասին

1 ԼՍԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համալսարանի դասախոսների կողմից առցանց իրականացվում են բոլոր դասապրոցեսները, դրանք վերահսկվում են ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնների, դեկանատների կողմից:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ավարտական կուրսերի ուսանողների մագիստրական թեզերի ու ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպելու համար իր կողմից պարոն Գ. Ասատրյանի և պարոն Վ, Մուրադյանի հետ կազմակերպվել են քննարկումներ և կարելի է ասել, որ տեխնիկական հարցերը լուծված են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Գ. Ասատրյանը, ում կարծիքով իսկապես իրենց հարթակն ունի բոլոր տեխնիկական հնարավորությունները տեսազանգերով, ձայնագրությամբ՝ վերոհիշյալ աշխատանքները կազմակերպելու համար:

Ռ. Մարդոյանի կարծիքով Mudl հավելվածին բավականին դժվար է տիրապետել, Zoom հավելվածը արդեն մատչելի է ուսանողներին ու դասախոսներին և իր կարծիքով այսօր պետք է ընտրել ավելի դյուրին ու հեշտ եղած տարբերակը:

Գ. Ասատրյանի կարծիքով այն այդքան էլ դժվար չէ, ինքը այնուամենայնիվ պատրաստ է կազմակերպել թեկուզ մեկօրյա վերապատրաստում, որպեսզի ուսանողներն ու դասախոսական կազմից որոշակի անձինք հավելվածին տիրապետեն:

Ն. Ավետիսյանը նշեց, որ ցանկալի կլինի, որ յուրաքանչյուր ամբիոնից ընտրվեն ներկայացուցիչներ, վերապատրաստման նպատակով, կարողանան հարթակից հստակ օգտվել, այնուհետև նոր գործարկեն, իրենք առաջիկա օրերի ընթացքում այս հարցը քննարկման կենթարկեն, ապա կներկայացնեն ռեկտորատի առաջիկա նիստին:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համալսարանում հեռավար ուսուցման տեխնիկական հարցերի կազմակերպման պատասխանատվությունը դրվում են Գ. Ասատրյանի և Վ. Մուրադյանի վրա:

2-րդ հարցի հետ կապված պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հեռավար ուսուցմամբ պայմանավորված բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգում փոփոխություններ և լրացումներ պետք է կատարվեն և հանձնարարեց ֆակուլտետների դեկաններին, ռազմական ամբիոնի պետին, Գ. Նիկողոսյանին, Ա. Սարգսյանին՝ տիկին Ավետիսյանի համակարգմամբ, կազմակերպել և իրականացնել այս աշխատանքները մինչև ապրիլի 25-ը ներառյալ, որպեսզի այն ներկայացվի գիտական խորհրդի քննարկմանն ու այնուհետ դրվի գործածության մեջ:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ իրենց կողմից արդեն իսկ աշխատանքներ կատարվել են և դրանց քննարկումից հետո կներկայացվեն առաջիկա ռեկտորատի նիստին:

3-րդ հարցի հետ կապված պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ դեկանների ուշադրությունն է հրավիրում հատկապես ավարտական կուրսերի ուսանողների վարձավճարների վճարման գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելուն, նշելով, արտակարգ դրությամբ պայմանավորված կառավարության կողմից ուսանողների վարձավճարների փոխհատուցման առանձնահատկությունները, ինչպես նաև բարերարների կողմից այս գործընթացը հովանավորելու պատրաստակամությանը: Պարոն Սերոբյանն առաջարկեց գործընթացը կազմակերպել կուրսերի ավագների օգնությամբ ու վերահսկել, որպեսզի և՛ ավարտական, և՛ մյուս կուրսերի ուսանողներին թույլատրվի ստուգարքներ հանձնելու միայն վարձը վճարելու պարագայում: Պարոն Սերոբյանը նշեց, որ վարձավճարի պարտք ունեցող ուսանողները, որոնք ստուգարքներին, ավարտական աշխատանքների ներկայացմանը չեն մասնակցի, /բացառությանբ բանակ մեկնողների և մագիստրատուրա ընդունվածների/ չեն հեռացվի բուհից,

հնարավոր է այս ուսանողների համար ավարտական աշխատանքների ներկայացման գործընթացը կազմակերպվի նաև սեպտեմբեր ամսին:

4-րդ հարցի հետ կապված տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ իրենց կենտրոնի համակարգմամբ ամբիոնների կողմից բոլոր դասախոսներին ուղարկվել են էլեկտրոնային մատյանները, հանձնարարվել, որ դրանք լրացվեն ապրիլի 20-ից սկսած և յուաքանչյուր շաբաթվա վերջում ուղարկվեն ամբիոնի գործավարին:

Պարոն Սերոբյանը ավելացրեց, որ այն դասախոսները, որոնք արտակարգ դրության հայտարարման սկզբնական փուլից արդեն իսկ կազմակերպել են իրենց դասապրոցեսը հեռավար հարթակներով, կարող են էլեկտրոնային մատյանները լրացնել այդ ժամանակահատվածից սկսած:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ ամփոփաթերթերի հետ կապված ինքը քննարկումներ է ունեցել տեխնիկական պատասխանատուների հետ, հարցը լուծման փուլում է, նույնիսկ ծրագրային փոփոխության կարիք չկա և առաջիկա օրերին դեկանատներին ու ամբիոններին կներկայացվեն ամփոփաթերթերի նոր ձևաչափերը:

5-րդ հարցի հետ կապված պարոն Սերոբյանն առաջարկեց արտակարգ դրությամբ պայմանավորված, բակալավրիատի հեռակա կրթական ծրագրով սովորող ուսանողների երկրորդ կիսամյակի դասապրոցեսը կազմակերպել 27.04-25.05 20202թ.-ին (01.04.2020-30.04.2020 ժամանակահատվածի փոխարեն):

Ռեկտորատի անդամները հավանության արժանացրին առաջարկը:

Պարոն Սերոբյանը ֆակուլտետների դեկաններին հանձնարարեց կազմակերպել դասացուցակի կազմման աշխատանքները՝ հորդորելով դեկաններին ուսանողների հետ համագործակցելով ու պայմանավորվելով գրաֆիկը ազատ թողնել, հանձնարարեց այս աշխատանքների կատարման վերահսկողությունը իրականացնել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից:

Հեռավար ուսուցմանը անցնելու պարագայում պարոն Սերոբյանն անդրադարձավ նաև դասախոսների կողմից ստուգումների իրականացման ձևերին, նշելով, որ կարելի է անցնել թեստերի միջոցով ստուգումներ անցկացնելու պրակտիկային:

Տիկին Ավետիսյանը հավաստեց, որ դասախոսը կարող է կատարել ստուգումների իրականացման մեթոդաբանության փոփոխություն՝ դուրս գալով տվյալ առարկայի առանձնահատկություններից:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ռեկտորատի բոլոր հարցերը զուտ տեղեկատվական և կազմակերպչական բնույթ ունեն և առանձին որոշումներ ընդունելու կարիք չկա:

Ռեկտորատի նախագահ՝
ռեկտորի ԺՊ — Ե. Սերոբյան

Ռեկտորատի քարտուղար,
գիտական քարտուղար՝ — Կ. Պետրոսյան

Պրոռեկտոր-աշխատակազմի
ղեկավարի ԺՊ — Գ. Նիկողոսյան

ՈՒսումնամեթոդական
գործընթացի կառավարման
կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի
ՊԿ — Ն. Ավետիսյան

Ռեկտորի խորհրդական՝ — Մ. Շահպարոնյան

Ֆինանսատնտեսական
վերլուծությունների,
ծրագրավորման և
հաշվապահական հաշվ. բաժնի
վարիչ-գլխավոր հաշվապահ՝ — Ռ. Քալաջյան

Արհեստակցական
կազմակերպության նախագահ՝ — Վ. Խաչատրյան

Գիտական քաղաքականության,
որակի ապահովման և
կառավարման կենտրոնի տնօրեն՝ — Ա. Սարգսյան

Արտաքին համագործակցության
և հասարակայնության հետ
կապերի կենտրոնի տնօրեն՝ — Հ. Մելքոնյան

Գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների,
նորարարությունների և ՏՏ
կենտրոնի տնօրեն՝ — Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ — Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ — Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝ — Ա. Հովհաննիսյան